




Մ. ԷԶՄԻՍՏՈՒՆԸ

«Միշտ անշարժ պահեա զԱթու Հայ-
կազնեայց»:

Քրիստոսի իշխանները սիրա և անձ-
նախրութեան մեծ գաղափարները, մարմին
առին Հոգեգալստեան օրը, երբ վառվեցաւ
սիրո կրակը մարդոց սրտում և հաստատ-
վեցաւ առաջին քրիստոնեայ համայնքը, ա-
ռաջին եկեղեցին:

Նույն այդ սիրո կրակը և լուսո ճրա-
դը վառվեցաւ նաեւ մեր երկրում Ս. Լու-
սավորչի շնորհիւ, որով ծնունդ առաւ
Հայաստանում քրիստոնեական եկեղեցին.
նրա հիմքը դրաւ բոլոր հայ եկեղեցիների
մայրը՝ Ս. Էջմիածինը, որի 1641-րդ տա-
րեդարձն ենք ատնում այսօր:

Հայ եկեղեցու շտապելի արտահայ-
տութիւնը Ս. Էջմիածինն է, որ ըստ ա-
վանդութեան, աստվածային ծագում ունի.
Հիսուս իջնում է երկնքից երկիր, լույս
սփռում շուրջը և ոսկե ուռածք բաղլում
երկիրը, ուր հիմնվում է Ս. Լուսավորչի
ձեռքով այս տաճարը՝ Ս. Էջմիածինը յուր
Հայրապետական Աթոռով:

Ս. Էջմիածնի և Հայոց Հայրապետու-
թեան պատմական արժեքն ուղիղ գնահա-
տելու համար պէտք է մի թոռացիկ տկ-
նարի ձգել մեր անցյալի վրա և մեր հոգու
առաջ կենդանացնել հայ եկեղեցու կրօնա-
կան, քաղաքակրթական և հովիւական ամ-
բողջ գործունեութիւնը իր բոլոր կողմե-
րով:

Հայոց Հայրապետութիւնը հայի
ղգայուն սիրտն է եղել, որ դարեր շարու-
նակ ապրել է նրա անհուն ցաւներով և
սակաւ ռաբախութիւններով:

Հայոց Հայրապետութիւնը հայի ըս-
տեղծող միտքն է եղել, որ լուսավորված

քրիստոնեական լուսով օտեղծել է դպակո-
նութիւն և գեղարվեստ՝ մեր փառքն ու
պարծանքը:

Հայոց Հայրապետութիւնը հայի ազ-
նիւթ և տոկուն կամքի արտահայտիչն է
եղել տալով առաքինութեան հերոսներ,
աստվածային կամքի ճշմարիտ աշակերտ-
ներ:

Հայոց Հայրապետութիւնը վեհ դա-
րափարների մի փունջ է, որ հյուսվել է
Հայոց մեծ Հայրապետների ձեռքով: Եթե
հիշենք Հայոց Հայրապետների շարքը, որ-
պիսի պատկառելի դեմքեր կտեսնենք, ո-
րոնց առաջ կիռնաբահի մեր գլուխը:

Ո՞վ չի ճանաչում Հայաստանի աստ-
բելանման Լուսավորչին, որ տվել է մեզ
եկեղեցի մեր կյանքի լուսատու լապտերը,
ալիւտարանի լուսով հայ կյանքը լուսավո-
րող ու պայծառացնող մի հաստատու-
թիւն, կամ Ներսէս Մեծին, որ ազաւթա-
ծահաճո հաստատութիւններով դարգարել
է մեր երկիրը և սերմանել առաքինութեան
սերմեր, որոնց միջոցով մարմնացել են
Քրիստոսի սիրո և անձնախրութեան մեծ
գաղափարները:

Ո՞վ չի հիշում երախտագետ սրտով Ս.
Սահակին ու Մեարոպին՝ հայի մտավոր
անդաստանի երկու ամրոցներին, որոնք գիր
ու դրագիտութիւն տվին և փրկեցին մեր
հոգեմէր կյանքը կորուստից, կամ Ղեւոն-
դին՝ իր հոսի կենդանի նահատակին:

Ո՞վ իրաւունք ունի մոռանալու մեր
պատմական անցյալում հայ եկեղեցու ինք-
նուրույնութեան համար ծախսուող, ներքին
կռիւներէ ժամանակ համեքայտութեան
կապ հանգիստացող, արտաքին բռնակալնե-
րի բարկութիւնը մեղմող, հայրենի երկիւ-



Ս. ԷՋՄԱԾԻՆ

րը կորստից փրկող և հուսահատ հայ ժողովրդին հույս ներշնչող անձնվեր Հայրապետներն:

Հայ եկեղեցու անցյալ պատմությունը հայ ազգի տառապանքների և վշտերի մի անվերջ շղթա է: Իսկ հայ երկիրը օտար, վայրադու ու անխիղճ ազգերի մրցության ասպարեզ: Այդ ավերածությունների մեջ Հայոց Հայրապետությունն է, որ մոխրի տակ թաքնված կայծակի նման սնչեջ մնացել է և եղել Հայ ժողովրդի հուսո և մխիթարության միակ ասպարեզը:

Ահա թե ո՛ր է գաղտնիքը այն դյուլթիզ զորություն և հրապույրի, որ ունեցել են Ս. Էջմիածինն ու Հայոց Հայրապետությունը դարեր շարունակ հայի աչքում:

Ս. Էջմիածնի տոնի և Հայրապետական Աթոռի տարեդարձի օրը վերառաքենք մեր աղոթքները մեր Մայր Հայրենիքի և Մայր Աթոռի հաստատության ու հարստեղծության համար, որպեսզի նոցա հովանու տակ դա և ծվարէ մեր տարազիր հայությունը և Հայրապետական օրհնության մայրի, զարգանա ու լուսավորվի իր հաղապատ երկրում:

Դու է՛լ, Հայ ժողովուրդ, մի՛ մոռանար քո բարերարին, քո հովանավորին, քո ծնողին և մաքուր սրտով աղոթի՛ր «Միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայց»:

Մզգընթիւ սեղակալ Յմենայն Հայոց Հայրապետութեան

ԳԵՎՈՐԳ ՅԱՐԺԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԵՈՐԾԻՅՅԵՍԿԻ

